**Գավառի պետական համալսարանի**

**2020 թվականի հունվարի 29-ի ռեկտորատի նիստի**

**արձանագրություն թիվ 1**

**ՕՐԱԿԱՐԳ**

1. Ուսումնական գործընթացը ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում
2. Քննաշրջանի ընթացքը ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում
3. ԳՊՀ մագիստրատուրայի երկրորդ կուրսերում գիտամանկավարժական պրակտիկայի անցկացման վերաբերյալ
4. 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակում ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների հետ աշխատանքի նոր ձևաչափերի, բաց դասերի թեմաների, ժամանակացույցի ներկայացում
5. ԳՊՀ «learn.gsu» էլեկտրոնային ուսուցման համակարգում հեռակա ուսուցմամբ կրթական ծրագրերի էլեկտրոնային ռեսուրսների մշտադիտարկման արդյունքների ներկայացում
6. Ավարտական աշխատանքերի և մագիստրոսական թեզերի կատարման հաշվետվողականության կառուցակարգի գործարկման, կիսամյակային հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ
7. Ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին ռեկտորատի 13 անդամներ:

**1. Լսեցին** - Ուսումնական գործընթացը ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում:
/Զեկ.՝ ՀՈՒՖ փոխդեկան Մ. Վ. Գարեյան/

Ներկայացվեցին ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման ուղղությամբ իրականացված աշխատանքների մանրամասներ:

**2. Լսեցին** – Քննաշրջանի ընթացքը ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին սահմանված ժամանակացույցով անցկացված քննությունններն ըստ բաժինների և կուրսերի, ինչպես նաև ուսանողների ֆինանսական պարտավորությունների պատշաճ կատարման վերաբերյալ մանրամասներ:

**3. Լսեցին** – ԳՊՀ մագիստրատուրայի երկրորդ կուրսերում գիտամանկավարժական պրակտիկայի անցկացման վերաբերյալ:

/Զեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

ԳՊՀ մագիստրատուրայի երկրորդ կուրսերում գիտամանկավարժական պրակտիկայի պատշաճ կազմակերպման նպատակով քննարկվեցին՝

- գիտամանկավարժական պրակտիկայի անցկացման նոր ձևաչափը՝ մագիստրոսին տալ հնարավորություն առնվազն մեկ բաց դաս անցկացնելու,
- գիտամանկավարժական պրակտիկայի համար անհրաժեշտ փաստաթղթերի թղթապանակի կառուցվածքը:

4. **Լսեցին** – 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակում ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների հետ աշխատանքի նոր ձևաչափերի, բաց դասերի թեմաների, ժամանակացույցի ներկայացման վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ/

Ներկայացվեցին ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների համար բաց դասերի կազմակերպման վերաբերյալ ամփոփ տվյալներ:

**5**. **Լսեցին** – ԳՊՀ «learn.gsu» էլեկտրոնային ուսուցման համակարգում հեռակա ուսուցմամբ կրթական ծրագրերի էլեկտրոնային ռեսուրսների մշտադիտարկման արդյունքների ներկայացում:

/Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Շ. Բաղդոյան/

Ներկայացվեցին ամփոփ տվյալներ ԳՊՀ «learn.gsu» էլեկտրոնային ուսուցման համակարգում հեռակա ուսուցմամբ կրթական ծրագրերի էլեկտրոնային ռեսուրսների մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ:

**6. Լսեցին** – Ավարտական աշխատանքերի և մագիստրոսական թեզերի կատարման հաշվետվողականության կառուցակարգի գործարկման, կիսամյակային հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ

/Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ/

Ներկայացվեցին ավարտական աշխատանքերի և մագիստրոսական թեզերի կատարման,

կիսամյակային հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ ամփոփ տվյալներ:

**7. Լսեցին** – Ընթացիկ հարցեր:

**7.1**. Ուսումնագիտական գործընթացին առնչվող հարցերի ներկայացում:

/Զեկ. ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Ա. Կուտուզյան/

Ներկայացվեցին և քննարկվեցին մի շարք հարցեր՝ կապված ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապատրաստման, կարգապահության պահպանման, դասախոսների ծանրաբեռնվածությունների ստուգման, ամբիոնի վարիչների հաշվետվությունների ժամանակացույցի կազման և հաստատման հետ:

/Զեկ. ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Ա. Կուտուզյան/

**Որոշեցին**․

1. Ֆակուլտետների խորհուրդների նիստերում քննարկել գիտամանկավարժական պրակտիկայի համար անհրաժեշտ փաստաթղթերի թղթապանակի կառուցվածքը և դիտարկումներն ու առաջարկությունները ներկայացնել մինչև ս/թ փետրվարի 2-ը:
2. Ներկայացնել ֆակուլտետներում կազմակերպվող բաց դասերի թեմաների և օրերի վերաբերյալ զեկուցագրեր, կազմել բաց դասերի անցկացման ժամանակացույց և իրազեկել համապատասխան ուսումնական հաստատություններին:
3. Ամբողջականացնել ԳՊՀ «learn.gsu» էլեկտրոնային ուսուցման համակարգում հեռակա ուսուցմամբ կրթական ծրագրերի էլեկտրոնային ռեսուրսների համալրման աշխատանքները:
4. Հետևողական լինել ուսման վարձերի՝ սահմանված ժամկետներում հավաքագրմանը:
5. Իրականացնել հետևողական աշխատանքներ դասամատյանները և տեղեկագրերը պատշաճ կերպով լրացնելու, կատարողական կարգապահությունը պահպանելու ուղղությամբ:

Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Շ. Բաղդոյան

**Գավառի պետական համալսարանի**

**2020 թվականի փետրվարի 5-ի ռեկտորատի նիստի**

**արձանագրություն թիվ 2**

**ՕՐԱԿԱՐԳ**

1. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի մասին
2. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի և երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ
3. ԳՊՀ մագիստրատուրայի 2020-2021 ուստարվա ընդունելության հայտերի ներկայացման մասին
4. 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակում ԳՊՀ դասախոսական անձնակազմի վերապատրաստման ծրագրերի վերաբերյալ ԳՊՀ ամբիոնների գործունեության հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ
5. Ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին ռեկտորատի 15 անդամներ:

**1. Լսեցին –** ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի մասին:

/Զեկ.՝ ՀՈՒՖ փոխդեկան Մ. Վ. Գարեյան/

Ներկայացվեցին ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման ուղղությամբ իրականացված աշխատանքների մանրամասներ:

**2. Լսեցին –** ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի և երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին սահմանված ժամանակացույցով անցկացված քննություններն ըստ բաժինների և կուրսերի, ուսանողների ցուցաբերած առաջադիմության արդյունքների:

3. **Լսեցին –** ԳՊՀ մագիստրատուրայի 2020-2021 ուստարվա ընդունելության հայտերի ներկայացման մասին:

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Քննարկվեցին ԳՊՀ մագիստրատուրայի 2020-2021 ուստարվա ընդունելության հայտերի ներկայացման, ըստ մասնագիտությունների՝ տեղերի հնարավոր քանակի վերաբերյալ մանրամասներ:

4. **Լսեցին –** 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակում ԳՊՀ դասախոսական անձնակազմի վերապատրաստման ծրագրերի վերաբերյալ:

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին ԳՊՀ դասախոսական անձնակազմի վերապատրաստման ծրագրերի թեմաները, վերապատրաստող անձանց և այլ տվյալներ:

5. **Լսեցին –** ԳՊՀ ամբիոնների գործունեության հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ

/Զեկուցող՝ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

Ներկայացվեցին ԳՊՀ-ի ամբիոնների գործունեության հաշվետվությունների ներկայացման ժամանակացույցը:

**Լսեցին –** Ընթացիկ հարցեր:

1.1 Ուսումնագիտական գործընթացին առնչվող հարցերի քննարկում:

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Քննարկվեցին առաջարկություններ մագիստրոսական գիտամանկավարժական պրակտիկայի համար անհրաժեշտ փաստաթղթերի թղթապանակի կառուցվածքի վերաբերյալ:

1.2 ԳՊՀ-ում հերթական գիտաժողովի կազմակերպման մասին հարցը /Զեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/:

Ներկայացվեցին 2020 թ. ապրիլի 18-ին Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին նվիրված ԳՊՀ գիտաժողովի նախապատրաստման վերաբերյալ որոշ դիտարկումներ:

**Որոշեցին.**

1. ՀՈՒՖ ուսումնական գործընթացի պատշաճ անցկացման նպատակով իրականացնել համաձայնեցված և համալիր աշխատանքներ:
2. ԳՊՀ ամբիոնների վարիչները ամբիոնների գործունեության հաշվետվություններ ներկայացնեն սահմանված պահանջներին, ձևաչափին և ժամանակացույցին համապատասխան:
3. Մագիստրոսական գիտամանկավարժական պրակտիկայի համար անհրաժեշտ փաստաթղթերի թղթապանակի կառուցվածքի վերաբերյալ դիտարկումները քննարկել աշխատանքային կարգով՝ ս/թ փետրվարի 7-ին:
4. ԳՊՀ հերթական գիտաժողովն անցկացնել 2020 թ. ապրիլի 18-ին՝ այն նվիրելով Ղևոնդ Ալիշյանի ծննդյան 200-ամյակին:

Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Շ. Բաղդոյան

**Գավառի պետական համալսարանի**

**2020 թվականի փետրվարի 12-ի ռեկտորատի նիստի**

**արձանագրություն թիվ 3**

ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ
2. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. առաջին կիսամյակի քննաշրջանի անցկացման մասին
3. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 5-րդ կուրսերի ուսանողների ավարտական աշխատանքների՝ 2020թ. ուստարվա առաջին կիսամյակում կատարված աշխատանքների հաշվետվությունների ներկայացում /Զեկուցողներ՝ համապատասխան ՄԿԾ-ի գծով ակադեմիական խորհրդատուներ/
4. ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման /«learn.gsu»/ համակարգ ներբեռնված՝ առկա ուսուցման կրթական ծրագրերի էլեկտրոնային ռեսուրսների մշտադիտարկման արդյունքների ներկայացում /Զեկուցող՝ ՌԱԲ մասնագետ Շ. Բաղդոյան/
5. ԳՊՀ-ում Ֆրանկոֆոնիայի հիմնադրման 50-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման մասին
6. Ուսանողների ուսման վարձերի վճարման վերաբերյալ
7. Ընթացիկ հարցեր։

Նիստը տեղի ունեցավ ընդլայնված կազմով։

**1. Լսեցին –** ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ։

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով իրականացված աշխատանքները։

**2. Լսեցին** – ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. առաջին կիսամյակի քննաշրջանի անցկացման մասին

/Զեկ.՝ ՀՈՒՖ փոխդեկան Մ. Վ. Գարեյան/

Նշվեց, որ 5-րդ կուրսի ուսանողների համար քննաշրջանը մեկնարկել է, և ներկայացվեցին մանրամասներ մյուս կուրսերի ստուգարքների և քննությունների կազմակերպման մասին։

**3. Լսեցին** – ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 5-րդ կուրսերի ուսանողների ավարտական աշխատանքների՝ 2020թ. ուստարվա առաջին կիսամյակում կատարված աշխատանքների հաշվետվությունների ներկայացում։

/Զեկուցողներ՝ համապատասխան ՄԿԾ-ի գծով ակադեմիական խորհրդատուներ/

Ներկայացվեցին հեռակա ուսուցման ֆակուլտետի 5-րդ կուրսերի ուսանողների ավարտական աշխատանքների՝ 2020թ. ուստարվա առաջին կիսամյակում կատարված աշխատանքների հաշվետվությունների վերաբերյալ մանրամասներ։

**4. Լսեցին** – ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման /«learn.gsu»/ համակարգ ներբեռնված՝ առկա ուսուցման կրթական ծրագրերի էլեկտրոնային ռեսուրսների մշտադիտարկման արդյունքների ներկայացում։

/Զեկուցող՝ ՈԱԲ մասնագետ Շ. Բաղդոյան/

Ներկայացվեցին ամփոփ տվյալներ ԳՊՀ «learn.gsu» էլեկտրոնային ուսուցման համակարգում առկա ուսուցմամբ կրթական ծրագրերի էլեկտրոնային ռեսուրսների մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ։

**5. Լսեցին** – ԳՊՀ-ում Ֆրանկոֆոնիայի հիմնադրման 50-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման մասին

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին ԳՊՀ-ում Ֆրանկոֆոնիայի հիմնադրման 50-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման վերաբերյալ թեմաներ և մանրամասներ։

**6. Լսեցին –** Ուսանողների ուսման վարձերի վճարման վերաբերյալ։

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին ուսանողների ուսման վարձերի հավաքագրման ուղղությամբ իրականացված աշխատանքները։

**7. Լսեցին –** Ընթացիկ հարցեր։

**7.1.** ԳՊՀ-ում գրսաշրջության ոլորտի աշխատակիցների և զբոսաշրջությամբ հետաքրքրվող անձանց համար կազմակերպվող վերապատրաստման դասընթացների վերաբերյալ։

/Զեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/։

Նշվեց, որ սույն թվականի մարտի 1-ից Գավառի պետական համալսարանը և «Գեղարեգ» կրթամշակութային հասարակական կազմակերպությունը համատեղ կմեկնարկեն վերապատրաստման դասընթացներ, որոնց կարող են մասնակցել ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի, Սևանի և Մարտունու տարածաշրջանների հյուրանոցների, հյուրատների սեփականատերեր, աշխատակիցներ, զբոսավարներ, զբոսաշրջությամբ հետաքրքրվող անձինք, ովքեր արդեն աշխատում կամ ցանկանում են աշխատել նշված ոլորտում։

**Որոշեցին.**

1. Հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողների ստուգարքների ու քննությունների ժամանակացույցը տեղակայել պաշտոնական կայքէջում, և դրանց անցկացումն ապահովել պատշաճ կերպով։
2. Շարունակել ԳՊՀ ‹‹learn.gsu›› էլեկտրոնային ուսուցման համակարգում առկա ուսուցմամբ կրթական ծրագրերի էլեկտրոնային ռեսուրսների համալրման աշխատանքները։
3. Հետևողական լինել ուսման վարձերի՝ ամենամսյա պարբերականությամբ հավաքագրմանը։

4. Զբոսաշրջության ոլորտի մասնագետների համար իրականացնել կրթական ծրագիր:
5. Հետևողական աշխատանք իրականացնել կարգապահության, տեղեկագրերի լրացման, մատենավարման կանոնների պահպանման, ստուգման գրքույկներում տվյալների ամբողջականացման ուղղությամբ:

Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Շ. Բաղդոյան

**Գավառի պետական համալսարանի**

**2020 թվականի փետրվարի 19-ի ռեկտորատի նիստի**

**արձանագրություն թիվ 4**

**ՕՐԱԿԱՐԳ**

1. ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգերում օտար լեզվի և գրականության ամբիոնի 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվության և 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում
2. ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգերում ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվության և 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում
3. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների 4-րդ կուրսերի ուսանողների ավարտական աշխատանքների՝ ընթացիկ ուստարվա առաջին կիսամյակում կատարված աշխատանքների հաշվետվությունների ներկայացում
4. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի և հեռակա ուսուցման ֆակուլտետում քննաշրջանի մասին
5. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության հետ համագործակցության վերաբերյալ
6. Ընթացիկ հարցեր:

Նիստը տեղի ունեցավ ընդլայնված կազմով:

1. **Լսեցին** – ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգերում օտար լեզվի և գրականության ամբիոնի 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվության և 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Գ. Միրիբյան/

Ներկայացվեց ամբիոնի գործունեության հաշվետվությունը՝ ըստ ուսանողների առաջադիմության, ուսումնառության, դասավանդման և գնահատման, գիտահետազոտական աշխատանքների, ուսումնական ռեսուրսների,

պրոֆեսորադասախոսական անձնակազմի, կրթության որակի ապահովման ուղղությունների:

**2. Լսեցին** – ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգերում ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվության և 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Վ. Ավետիսյան/

Ներկայացվեց ամբիոնի գործունեության հաշվետվությունը՝ ըստ ուսանողների առաջադիմության, կրթական ծրագրի բարեփոխումների և զարգացումների, ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների, գիտահետազոտական աշխատանքների ուղղվածության, ուսումնական ռեսուրսների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, կրթության որակի ապահովման գործընթացների:

**3. Լսեցին** – ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների 4-րդ կուրսերի ուսանողների ավարտական աշխատանքների՝ ընթացիկ ուստարվա առաջին կիսամյակում կատարված աշխատանքների հաշվետվությունների ներկայացում:

/Զեկուցողներ՝ համապատասխան ՄԿԾ-ի գծով ակադեմիական խորհրդատուներ/

Ներկայացվեցին ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների 4-րդ կուրսերի ուսանողների ավարտական աշխատանքների՝ ընթացիկ ուստարվա առաջին կիսամյակում կատարված աշխատանքների հաշվետվությունների վերաբերյալ ամփոփ տվյալներ:

**4. Լսեցին** – ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի և հեռակա ուսուցման ֆակուլտետում քննաշրջանի մասին

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ, ՀՈՒՖ փոխդեկան Մ. Վ. Գարեյան /

Ներկայացվեցին ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով իրականացված աշխատանքների մանրամասներ և հեռակա ուսուցման ֆակուլտետում սահմանված ժամանակացույցով իրականացված քննությունների, վարձերի հավաքագրման վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ բաժինների և կուրսերի:

**5. Լսեցին –** ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության հետ համագործակցության վերաբերյալ:

/Զեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

Ներկայացվեց ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության հետ համագործակցության վերաբերյալ ամփոփ տվյալներ:

**6. Լսեցին** – Ընթացիկ հարցեր:

**6.1.** «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի նոր տարբերակի քննարկման վերաբերյալ:

/Զեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/:

Ներկայացվեցին և քննարկվեցին «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի հիմնական դրույթները, եղան տարբեր առաջարկություններ:

6.2 Ուսանողների ուսման վարձերի վճարման վերաբերյալ:

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին ուսանողների ուսման վարձերի հավաքագրման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

6.3. Ս.թ. հոկտեմբերի 10-ին Հայաստանում նախատեսվող 10-ը միլիոն ծառ տնկելու ծրագրի վերաբերյալ ԿԳՄՍ նախարարությունից ստավցած գրության մասին:

/Զեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/:

Ներկայացվեց կլիմայի փոփոխության և ապօրինի անտառհատումների դեմ ուղղված գործողություններն ապահովելու նպատակով՝ ս.թ. հոկտեմբերի 10-ին Հայաստանում նախատեսվող 10 միլիոն ծառ տնկելու ծրագրի վերաբերյալ ԿԳՄՍ նախարարությունից ստացված գրությունը և քննարկվեցին նախապատրաստական աշխատանքները:

6.4. 2019-2020 ուստարվա II կիսամյակում Հայաստանի անկախությանը, ինչպես նաև 2020 թվականի այլ հոբելյաններին նվիրված միջոցառումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ:

/Զեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/:

Ներկայացվեց ԿԳՄՍ նախարարությունից ստացված Անկախությանը նվիրված միջոցառումների վերաբերյալ գրությունը, 2020 թվականի հոբելյանների ցանկը, և քննարկվեցին ԳՊՀ միջոցառումները:

**Որոշեցին.**

1. Օտար լեզվի և գրականության, Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնների վարիչների 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվություններն ընդունել ի գիտություն:
2. Օտար լեզվի և գրականության, Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնների 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգերի իրականացման արդյունքները մշտադիտարկել ԳՊՀ Որակի ապահովման բաժնի կողմից:
3. Հետևողական լինել ուսման վարձերի՝ ամենամսյա պարբերականությամբ հավաքագրմանը:
4. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության հետ համագործակցության նպատակով յուրաքանչյուր ֆակուլտետից ներկայացնել 5-ական ուսանող՝ կամավորականների խումբ ստեղծելու համար:
5. «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի նոր տարբերակի վերաբերյալ առաջարկությունները և դիտարկումները ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ:
6. 2019-2020 ուստարվա II և 2020-2021 ուստարվա I կիսամյակներում նախատեսված միջոցառումների ցանկում ներառել և իրականացնել 2020 թվականի հոբելյաններին նվիրված միջոցառումներ:

Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Շ. Բաղդոյան

**Գավառի պետական համալսարանի**

**2020 թվականի փետրվարի 27-ի ռեկտորատի նիստի**

**արձանագրություն թիվ 5**

ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգերում հայոց լեզվի և գրականության ամբիոնի 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվության և 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում
2. ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգերում հասարակական գիտությունների ամբիոնի 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվության և 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում
3. ԳՊՀ մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների մագիստրոսական թեզերի՝ ընթացիկ ուստարվա առաջին կիսամյակում կատարված աշխատանքների հաշվետվությունների ներկայացում
4. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի և հեռակա ուսուցման ֆակուլտետում քննաշրջանի մասին
5. Ընթացիկ հարցեր։

Նիստը տեղի ունեցավ ընդլայնված կազմով։

1. **Լսեցին** – ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգերում հայոց լեզվի և գրականության ամբիոնի 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվության և 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում։

/Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Վ. Գրիգորյան/

Ներկայացվեց ամբիոնի գործունեության հաշվետվությունը՝ ըստ ուսանողների առաջաղիմության, ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների, գիտահետազոտական աշխատանքների ուղղվածության, ուսումնական ռեսուրսների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, կրթության որակի ապահովման գործընթացի։

2. **Լսեցին** – ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգերում հասարակական գիտությունների ամբիոնի 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվության և 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Հ. Հարությունյան/

Ներկայացվեց ամբիոնի գործունեության հաշվետվությունը՝ ըստ ուսանողների առաջադիմության, կրթական ծրագրի բարեփոխումների և զարգացումների, ուսումնառության, դասավանդման և գնահատման, գիտահետազոտական աշխատանքների, ուսումնական ռեսուրսների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, կրթության որակի ապահովման ուղղությունների:

3. **Լսեցին** – ԳՊՀ մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների մագիստրոսական թեզերի՝ ընթացիկ ուստարվա առաջին կիսամյակում կատարված աշխատանքների հաշվետվությունների ներկայացում:

/Զեկուցողներ՝ համապատասխան ՄԿԾ-ների գծով ակադեմիական խորհրդատուներ/

Ներկայացվեցին ԳՊՀ մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների մագիստրոսական թեզերի՝ ընթացիկ ուստարվա առաջին կիսամյակում կատարված աշխատանքների հաշվետվությունների վերաբերյալ ամփոփ տվյալներ:

**4. Լսեցին** – ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում ուսումնական գործընթացի և հեռակա ուսուցման ֆակուլտետում քննաշրջանի մասին:

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ, ՀՈՒՖ փոխդեկան Մ. Վ. Գարեյան /

Ներկայացվեցին ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով իրականացված աշխատանքների մանրամասներ և հեռակա ուսուցման ֆակուլտետում սահմանված ժամանակացույցով իրականացված քննությունների, վարձերի հավաքագրման վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ բաժինների և կուրսերի:

**5**. **Լսեցին** – Ընթացիկ հարցեր:

5.1 Ուսանողների ուսման վարձերի վճարման վերաբերյալ:

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին ուսանողների ուսման վարձերի հավաքագրման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

5.2. Ուսանողական գիտաժողովների անցկացման մասին:

/Զեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/

Ներկայացվեցին Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կողմից կազմակերպվելիք գիտաժողովներին մասնակցության պայմանները և պահանջները, գրանցման և անցկացման ժամկետները:

5. 3. ԳՊՀ-դպրոց կապերի ամրապնդման մասին:

/Բնագիտական ֆակուլտետի դեկան Մ. Պ. Ավագյան/

Ներկայացվեցին Գեղարքունիքի մարզի դպրոցներ փոխայցելությունների վերաբերյալ տնօրենների հետ պայմանավորվածության և համագործակցության նոր հնարավորությունների վերաբերյալ:

**Որոշեցին.**

1. Հայոց լեզվի և գրականության, Հասարակական գիտությունների ամբիոնների վարիչների 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվություններն ընդունել ի գիտություն:
2. Հայոց լեզվի և գրականության, Հասարակական գիտությունների ամբիոնների 2019-2020 ուստարվա զարգացման հայեցակարգերի նկատմամբ իրականացնել մշտադիտարկում ԳՊՀ Որակի ապահովման բաժնի կողմից:
3. Հետևողական լինել ուսման վարձերի՝ ամենամսյա պարբերականությամբ հավաքագրմանը:
4. Ապահովել Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կողմից կազմակերպվելիք ուսանողական գիտաժողովներին ԳՊՀ ուսանողների մասնակցությունը:
5. Հետևողականորեն իրականացնել ԳՊՀ-Գեղարքունիքի մարզի դպրոցներ համագործակցության ծրագրերը:

Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Շ. Բաղդոյան

**Գավառի պետական համալսարանի**

**2020 թվականի մարտի 11-ի ռեկտորատի նիստի**

**արձանագրություն թիվ 6**

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ ուսումնական հաստատություններում հայտարարված մեկշաբաթյա արձակուրդի հետ կապված՝ ԳՊՀ-ում և թ մարտի 4-ից 8-ը բաց թողնված դասերի լրացման, քննաշրջանի և լուծարային շրջանի կազմակերպման մասին
2. ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախնական տարբերակների հանձնման ու ստուգման գործընթացների մասին
3. ԳՊՀ-ում 2019-2020 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ
4. Ուսանողներին՝ հակավիրուսային միջոցառումների վերաբերյալ իրազեկելու մասին
5. Ընթացիկ հարցեր։

Նիստը տեղի ունեցավ ընդլայնված կազմով։

1. **Լսեցին** – ՀՀ ուսումնական հաստատություններում հայտարարված մեկշաբաթյա արձակուրդի հետ կապված՝ ԳՊՀ-ում և թ մարտի 4-ից 8-ը բաց թողնված դասերի լրացման, քննաշրջանի և լուծարային շրջանի կազմակերպման մասին։
/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին ՀՀ ուսումնական հաստատություններում հայտարարված մեկշաբաթյա արձակուրդի հետ կապված՝ ԳՊՀ-ում և թ մարտի 4-ից 8-ը բաց թողնված դասերի լրացման, քննաշրջանի և լուծարային շրջանի կազմակերպման վերաբերյալ դիտարկումներ և ամփոփ տվյալներ։

**2. Լսեցին** – ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախնական տարբերակների հանձնման ու ստուգման գործընթացների մասին։

/Զեկուցողներ՝ համապատասխան ՄԿԾ-ների գծով ակադեմիական խորհրդատուներ/

Ներկայացվեցին ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախնական տարբերակների հանձնման ու ստուգման գործընթացների մասին ամփոփ տվյալներ։

**3. Լսեցին** – ԳՊՀ-ում 2019-2020 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին ամփոփիչ ատեստավորմանն ընդառաջ իրականացված աշխատանքները հետևյալ ուղղություններով՝ դիպլոմների հավելվածի կազմում, շրջանավարտների անձնական գործերում փաստաթղթերի ստուգում, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարողականների ամփոփում՝ հաշվետվության ձևաչափին համապատասխան, գրախոսման վերաբերյալ ամփոփ տվյալներ:

**4. Լսեցին** – Ուսանողներին՝ հակավիրուսային միջոցառումների վերաբերյալ իրազեկելու մասին

/Զեկ.՝ ԳՊՀ ռեկտոր՝ Ռ Հակոբյան/

Ներկայացվեց ուսանողներին՝ նոր կորոնավիրուս /COVID-19/-ի դեմ միջոցառումների, անվտանգության կանոնների վերաբերյալ իրազեկելու մասին:

**5. Լսեցին** – Ընթացիկ հարցեր:

**5.1.** Ուսումնական գործընթացին առնչվող հարցերի ներկայացում:

/Զեկ. ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Ա. Կուտուզյան/

Ներկայացվեցին մի շարք դիտարկումներ ամփոփիչ ատեստավորման վերաբերյալ շրջաբերականով նախատեսված աշխատանքների կատարման, կարգապահության պահպանման, վերապատրաստման դասընթացների կազմակերպման հարցերի մասին:

**5. 2.** Ուսանողների ուսման վարձերի վճարման վերաբերյալ:

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին ուսանողների ուսման վարձերի հավաքագրման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

**Որոշեցին.**

1. Ֆակուլտետներում լրացնել ՀՀ ուսումնական հաստատություններում հայտարարված մեկշաբաթյա արձակուրդի հետ կապված՝ ԳՊՀ-ում ս թ մարտի 4-ից 8-ը բաց թողնված դասերը:

2. Ֆակուլտետներում կազմակերպել հաղիպում-քննարկումներ՝ ուսանողներին նոր կորոնավիրուս /COVID-19/-ի դեմ հակավիրուսային միջոցառումների, անվտանգության կանոնների վերաբերյալ իրազեկելու նպատակով:
3. ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների աշակերտների այցերը ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի բնագիտության լաբորատորիա կազմակերպել՝ իրավիճակից ելնելով:
4. Հետևողական լինել ուսման վարձերի՝ ամենամսյա պարբերականությամբ հավաքագրմանը:

Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Շ. Բաղդոյան

**Գավառի պետական համալսարանի**

**2020 թվականի ապրիլի 20-ի**

**ռեկտորատի նիստի արձանագրություն**

**թիվ 7**

**ՕՐԱԿԱՐԳ**

1. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում իրականացվող առցանց դասերի ընթացքի մասին
2. Հեռակա ուսուցման ֆակուլտետում քննաշրջանը և լուծարային շրջանը առցանց կազմակերպելու մասին
3. ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ
4. «ԳՊՀ էլեկտրոնային դեկանատ» համակարգի կառուցվածքի ներկայացում
5. Ընթացիկ հարցեր:

Նիստը տեղի ունեցավ ընդլայնված կազմով, առցանց եղանակով:

1. **Լսեցին** – ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում իրականացվող առցանց դասերի ընթացքի մասին:

/ Զեկուցողներ ՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում իրականացվող առցանց դասերի ընթացքի, ուսանողների մասնակցության, առցանց դասաժամերի կատարողականի վերաբերյալ ամփոփ տվյալներ:

2. **Լսեցին** – Հեռակա ուսուցման ֆակուլտետում քննական և լուծարային շրջանը առցանց կազմակերպելու մասին:
/Զեկուցող՝ ՀՈՒՖ փոխդեկան Մ. Վ. Գարեյան/

Ներկայացվեց Հեռակա ուսուցման ֆակուլտետում քննական և լուծարային շրջանը առցանց կազմակերպելու համար իրականացվող աշխատանքների ընթացքը:

3. **Լսեցին** – ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ /

Ներկայացվեցին ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերջնական էլեկտրոնային տարբերակների հավաքագրման, համապատասխան ամբիոնների վարիչների և գիտական ղեկավարների կողմից դրանց հաստատման, կարծիքների նախապատրաստման վերաբերյալ ամփոփ տվյալներ:

**4Լսեցին** – «ԳՊՀ էլեկտրոնային դեկանատ» համակարգի կառուցվածքի ներկայացում:

/Զեկուցող՝ ԳՊՀ ՏՏ բաժնի վարիչ ՄԱՀովհաննիսյան /

Ներկայացվեց «ԳՊՀ էլեկտրոնային դեկանատ» համակարգի կառուցվածքը, հնարավորությունները, դասախոսին հասանելի մոդուլները՝ առցանց աշխատանքներ իրականացնելու նպատակով:

**5Լսեցին** – Ընթացիկ հարցեր:

**5.1.** Ուսումնագիտական գործընթացին առնչվող հարցերի ներկայացում:

/Զեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Ա. Կուտուզյան/

Ներկայացվեցին և քննարկվեցին մի շարք հարցեր՝ կապված էլեկտրոնային եղանակով միջանկյալ քննությունների, անհատական և կուրսային աշխատանքների կատարման, պրակտիկաների արդյունքների ամփոփման, ինչպես նաև ուսումնական շաբաթվա ավարտին առցանց դասաժամերի կատարողականի և մնացորդային ժամերի, էլեկտրոնային գրանցամատյանում արձանագրված ժամաքանակների ստուգման վերաբերյալ:

**5.2** Ուսանողների ուսման վարձերի վճարման վերաբերյալ:

/Զեկուցող՝ ԳՊՀ գլխավոր հաշվապահ ԳՄուրադյան/

Ներկայացվեցին ուսանողների ուսման վարձերի հավաքագրման վերաբերյալ ամփոփ տվյալներ:

**Որոշեցին.**

1. Յուրաքանչյուր ուսումնական շաբաթվա ավարտին առցանց դասաժամերի կատարողականի և մնացորդային ժամերի վերաբերյալ տվյալները՝ ըստ յուրաքանչյուր առարկայի, ներկայացնել համապատասխան դասախոսներին՝ հետագա դասաժամերի ճիշտ պլանավորման և մինչև ս. թ. մայիսի ավարտը դասընթացն ավարտելու համար:
2. Միջանկյալ քննություններն իրականացնել առցանց եղանակով, բանավոր կամ թեստային տարբերակով: Միջանկյալ քննությունների հաստատված ժամանակացույցերը տեղադրել ԳՊՀ կայքէջում:
3. Ապահովել ուսանողների կողմից համապատասխան առարկաների կուրսային և անհատական աշխատանքների էլեկտրոնային եղանակով կատարումը և առցանց ներկայացումը՝ համագործակցելով դասախոսների հետ:
4. Պրակտիկաների արդյունքների ամփոփումը կատարել առցանց՝ պրակտիկաների ղեկավարների և ամբիոնների վարիչների անմիջական պատասխանատվությամբ:

5. ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանություններն իրականացնել առցանց ս. թ. մայիս ամսին:
6. Ներկայացնել զեկուցագրեր ամփոփիչ ատեստավորմանը մասնակցող ուսանողների վերաբերյալ:
7. Իրականացնել ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման /learn.gsuam/ համակարգի ներֆակուլտետային ստուգումներ՝ պարզելու այն դասընթացները, որոնց գծով դասախոսությունները, անհատական, կուրսային աշխատանքների թեմաները, միջանկյալ և ամփոփիչ քննությունների հարցաշարերը, առաջարկվող մասնագիտական գրականության ցանկը, այլ ուսումնական նյութեր լրացման կարիք ունեն և զգուշացնել դասախոսներին՝ համապատասխան ուսումնական նյութերի օպերատիվ լրացման անհրաժեշտության մասին:
8. Հեռակա ուսուցման ֆակուլտետում քննական և լուծարային շրջաններն առցանց կազմակերպելու համար մշակել համապատասխան ժամանակացույց և տեղադրել ԳՊՀ կայքէջում:
9. Գործարկել «ԳՊՀ էլեկտրոնային դեկանատ» համակարգը, տեղեկացնել դասախոսներին համակարգից օգտվելու, էլեկտրոնային տեղեկագրերը լրացնելու կանոնները:
10. Տարաժամկետել ուսանողների կողմից ուսման վարձերի վճարումը:

Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Ծ. Բաղդոյան

**Գավառի պետական համալսարանի**

**2020 թվականի ապրիլի 27-ի ռեկտորատի**

**նիստի արձանագրություն թիվ 8**

**ՕՐԱԿԱՐԳ**

1. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում իրականացվող առցանց դասերի և լուծարային շրջանի ընթացքի մասին
2. Հեռակա ուսուցման ֆակուլտետում իրականացվող առցանց քննաշրջանի և ավարտական կուրսերի լուծարային շրջանի ընթացքի մասին
3. Գավառի պետական համալսարանի ավարտական կուրսերի ուսանողների մանկավարժական, գիտամանկավարժական, գիտահետազոտական, նախաավարտական և արտադրական պրակտիկաների պաշտպանության կազմակերպման և անցկացման մասին
4. ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության կազմակերպման և անցկացման մասին
5. 2020-2021 ուսումնական տարվա բակալավրիատի առկա ուսուցման ընդունելության կանոնների մասին
6. Ընթացիկ հարցեր:

Նիստը տեղի ունեցավ ընդլայնված կազմով, առցանց եղանակով:

1. **Լսեցին** – ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում իրականացվող առցանց դասերի և լուծարային շրջանի ընթացքի մասին:

   / Զեկուցողներ՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում իրականացվող առցանց դասերի ընթացքի, ուսանողների մասնակցության, առցանց դասաժամերի

կատարողականի, առցանց անցկացվող միջանկյալ քննությունների ընթացքի և լուծարային շրջան անցած ուսանողներին առնչվող ամփոփ տվյալներ:

2. **Լսեցին** – Հեռակա ուսուցման ֆակուլտետում իրականացվող առցանց քննաշրջանի և ավարտական կուրսերի լուծարային շրջանի ընթացքի մասին:

/Զեկուցող՝ ՀՈՒՖ փոխդեկան Մ. Վ. Գարեյան/

Ներկայացվեց Հեռակա ուսուցման ֆակուլտետում քննությունների ընթացքի, վարձավճարների հավաքագրման և 5-րդ կուրսերի լուծարային շրջանի վերաբերյալ ամփոփ տվյալներ:

3. **Լսեցին** – Գավառի պետական համալսարանի ավարտական կուրսերի ուսանողների մանկավարժական, գիտամանկավարժական, գիտահետազոտական, նախաավարտական և արտադրական պրակտիկաների պաշտպանության կազմակերպման և անցկացման մասին:

/Զեկուցողներ՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ /

Ներկայացվեցին ավարտական կուրսերի ուսանողների մանկավարժական, գիտամանկավարժական, գիտահետազոտական, նախաավարտական և արտադրական պրակտիկաների պաշտպանության կազմակերպման և անցկացման, ուսանողների կողմից պրակտիկաների օրագրերի առցանց ներկայացման, պրակտիկաների պաշտպանության ժամանակացույցերի մշակման վերաբերյալ ամփոփ տվյալներ:

4. **Լսեցին** – ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության կազմակերպման և անցկացման մասին

/Զեկուցողներ՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ /

Ներկայացվեց ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության առցանց կազմակերպման, անցկացման մասին դիտարկումներ, ինչպես նաև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերջնական էլեկտրոնային տարբերակների հավաքագրման, համապատասխան ամբիոնների վարիչների և գիտական ղեկավարների կողմից դրանց

հաստատման, կարծիքների նախապատրաստման, ժամանակացույցերի մշակման վերաբերյալ ամփոփ տվյալներ:

4. **Լսեցին** – 2020-2021 ուսումնական տարվա բակալավրիատի առկա ուսուցման ընդունելության կանոնների մասին:

/Զեկ.՝ ԳՊՀ ռեկտոր՝ Ռ Հակոբյան/

Ներկայացվեց 2020-2021 ուսումնական տարվա բակալավրիատի առկա ուսուցման ընդունելության կանոնները, որոնք սահմանվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից՝ ՀՀ-ում արտակարգ դրության պայմաններում, դիմում-հայտերի հայտագրման և ներկայացման ժամկետների վերաբերյալ ամփոփ տվյալներ:

6 . **Լսեցին** – Ընթացիկ հարցեր:

**6.1** Ուսանողների աջակցության, ուսման վարձերի փոխհատուցման մասին:

/Զեկ.՝ Արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ Ն. Ա. Միրիբյան/

Ներկայացվեց՝

1. Հայ կրթական հիմնարկության կրթաթոշակային ծրագիրը, որին կարող են դիմել ոչ միայն ուսանողները, այլև ԳՊՀ ընդունվել պատրաստվող աշակերտ-դիմորդներն ու քոլեջների շրջանավարտները:

2 Գավառի պետական համալսարանի և «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի միջև կնքված համագործակցության հուշագրի համաձայն՝ «ԱՄՔՈՐ Հայաստան» հիմնադրամի կողմից «Աջակցություն երիտասարդների ուսմանը՝ հանուն ապագայի» ծրագրի շրջանակներում հայտարարված մրցույթի և երկու տարի անընդմեջ Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական և բնագիտական ֆակուլտետների հինգ ուսանողների մագիստրատուրայի ուսման վարձը վճարելու մասին: Նշվեց նաև, որ ընտրված ուսանողների համար կազմակերպվելու են «Ծրագրի մշակում», «Բյուջետավորում» և «Ներկայացման հմտություններ» դասընթացներ:

**6.2** Ուսանողների ուսման վարձերի վճարման վերաբերյալ:

/Զեկուցող՝ ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գ Մուրադյան/

Ներկայացվեցին ուսանողների ուսման վարձերի հավաքագրման վերաբերյալ ամփոփ տվյալներ:

**Որոշեցին.**

1. Հաստատել պրակտիկաների պաշտպանության ժամանակացույց և իրազեկել ուսանողներին, այն տեղակայել ԳՊՀ կայքէջում:
2. Հաստատել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության ժամանակացույց և իրազեկել ուսանողներին, այն տեղակայել ԳՊՀ կայքէջում:
3. ԳՊՀ կայքէջում ստեղծել պրակտիկայի առցանց օրագիր:
4. Նկատողություն հայտարարել այն ուսանողներին, ովքեր չեն մասնակցել առցանց դասերին:
5. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի հաստատված տարբերակները տեղադրել «ԳՊՀ ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր» էլեկտրոնային համակարգում:
6. «ԳՊՀ էլեկտրոնային դեկանատ» համակարգի կիրառման վերաբերյալ ուղեցույցը ուղարկել դասախոսներին և այս ուղղությամբ կազմակերպել վերապատրաստման դասընթաց:
7. ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից մշտադիտարկել առցանց դասերի անցկացման գործընթացը:

Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Շ. Բաղդոյան

**Գավառի պետական համալսարանի**

**2020 թվականի մայիսի 11-ի ռեկտորատի**

**նիստի արձանագրություն թիվ 9**

**ՕՐԱԿԱՐԳ**

1. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասընթացների, ուսումնական, մանկավարժական, արտադրական, նախաավարտական, ինչպես նաև մագիստրատուրայի գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկաների պաշտպանության, ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունների անցկացման վերաբերյալ
2. Հեռակա ուսուցման ֆակուլտետում ավարտական կուրսերի լուծարային շրջանի, առաջինից չորրորդ կուրսերի քննաշրջանի, մանկավարժական, արտադրական, նախաավարտական պրակտիկաների պաշտպանության կազմակերպման, ինչպես նաև 2020թ ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասընթացների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ
3. 2020թ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման առցանց անցկացման էլեկտրոնային հարթակի տեխնիկական և բովանդակային նկարագրի մասին
4. Ուսանողների ուսման վարձերի վճարման, սոցիալապես անապահով ուանողներին ֆինանսական աջակցության վերաբերյալ
5. Ընթացիկ հարցեր

Նիստը տեղի ունեցավ ընդլայնված կազմով, առցանց եղանակով:

1. **Լսեցին** – ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2019-2020 ուսումնական տարվա

2-րդ կիսամյակի դասընթացների, ուսումնական, մանկավարժական, արտադրական, նախաավարտական, ինչպես նաև մագիստրատուրայի գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկաների պաշտպանության, ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունների անցկացման վերաբերյալ:

/ Զեկուցողներ ՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասընթացների, ուսումնական, մանկավարժական, արտադրական, նախաավարտական, ինչպես նաև մագիստրատուրայի գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկաների պաշտպանության, ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունների անցկացման վերաբերյալ ամփոփ տվյալներ:

2. **Լսեցին** – Հեռակա ուսուցման ֆակուլտետում ավարտական կուրսերի լուծարային շրջանի, առաջինից չորրորդ կուրսերի քննաշրջանի, մանկավարժական, արտադրական, նախաավարտական պրակտիկաների պաշտպանության կազմակերպման, ինչպես նաև 2020թ ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասընթացների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

/Զեկուցող՝ ՀՈՒՖ փոխդեկան Մ. Գարեյան/

Ներկայացվեց Հեռակա ուսուցման ֆակուլտետում ավարտական կուրսերի լուծարային շրջանի, առաջինից չորրորդ կուրսերի քննաշրջանի, մանկավարժական, արտադրական, նախաավարտական պրակտիկաների պաշտպանության կազմակերպման, ինչպես նաև 2020թ ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասընթացների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ ամփոփ տվյալներ:

3. **Լսեցին** – 2020թ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման առցանց անցկացման էլեկտրոնային հարթակի տեխնիկական և բովանդակային նկարագրի մասին հարցը:

/Զեկուցողներ՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն Կուտուզյան, ՏՏ բաժնի վարիչ Մ Հովհաննիսյան/:

Ներկայացվեց 2020թ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման առցանց անցկացման էլեկտրոնային հարթակի տեխնիկական և բովանդակային հնարավորությունների մասին:

4. **Լսեցին** – Ուսանողների ուսման վարձերի վճարման, սոցիալապես անապահով ուանողներին ֆինանսական աջակցության վերաբերյալ:
/Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ, գլխավոր հաշվապահ/

Ներկայացվեցին ուսանողների ուսման վարձերի վճարման տարաժամկետման, սոցիալապես անապահով ուանողներին ֆինանսական աջակցության վերաբերյալ հարցեր:

**5. Լսեցին** – Ընթացիկ հարցեր:

**5.1.** Ուսումնազիտական գործընթացին առնչվող հարցերի ներկայացում:
/Զեկուցող՝ ուսումնազիտական գծով պրոռեկտոր Ն. Ա. Կուտուզյան/

Ներկայացվեցին և քննարկվեցին ամփոփիչ ատեստավորման քննությունների արձանագրությունների մատյանների, տեղեկագրերի պատրաստման, ամփոփիչ ատեստավորման քննությունները առցանց անցկացնելու վերաբերյալ դիտարկումներ:
5.2. **Լսեցին** – ԳՊՀ «learn.gsu» էլեկտրոնային ուսուցման համակարգում հեռակա ուսուցմամբ կրթական ծրագրերի էլեկտրոնային ռեսուրսների մշտադիտարկման արդյունքների ներկայացում:
/Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Շ. Բաղդոյան/
Ներկայացվեցին ամփոփ տվյալներ ԳՊՀ «learn.gsu» էլեկտրոնային ուսուցման համակարգում հեռակա ուսուցմամբ կրթական ծրագրերի էլեկտրոնային ռեսուրսների մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ:

**Որոշեցին.**

1. Ամփոփիչ ատեստավորման առցանց անցկացման էլեկտրոնային հարթակ վերբեռնել Գավառի պետական համալսարանի 2019-2020 ուսումնական տարվա առցանց ամփոփիչ ատեստավորման կանոնակարգին կից հավելվածները:

2. ԳՊՀ Ակադեմիական քաղաքականության բաժնին՝ պատրաստել ամփոփիչ ատեստավորման քննությունների արձանագրությունների մատյանները:
3. Շարունակել ԳՊՀ «learn.gsu» էլեկտրոնային ուսուցման համակարգում հեռակա ուսուցմամբ կրթական ծրագրերի էլեկտրոնային ռեսուրսների համալրման աշխատանքները:
4. Հետևողական լինել ուսանողներին տարբեր ձևերով բարոյական և նյութական աջակցության խնդիրների լուծմանը, ներգրավել հովանավոր կազմակերպությունների, թույլատրել մասնակցելու լուծարային շրջանին:

Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Շ. Բաղդոյան

**Գավառի պետական համալսարանի**

**2020 թվականի հունիսի 8-ի ռեկտորատի**

**նիստի արձանագրություն թիվ 10**

**ՕՐԱԿԱՐԳ**

1. ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների 2019-2020 ուսումնական տարվա ավարտական կուրսերի ուսանողների առցանց ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ
2. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասընթացների ավարտի և քննաշրջանի մեկնարկի մասին
3. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասընթացների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ
4. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2020թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առցանց դասերի և լուծարային շրջանի անցկացման նպատակով

նախագծված էլեկտրոնային դեկանատի բովանդակային ու տեխնիկական բնութագրի կատարելագործման մասին

5. Ուսանողների ուսման վարձերի վճարման վերաբերյալ
6. Ընթացիկ հարցեր

Նիստը տեղի ունեցավ ընդլայնված կազմով, առցանց եղանակով:

1. **Լսեցին** – ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների 2019-2020 ուսումնական տարվա ավարտական կուրսերի ուսանողների առցանց ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ:
/ Զեկուցողներ՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին սահմանված ժամանակացույցով կազմակերպված և անցկացված ԳՊՀ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների 2019-2020 ուսումնական տարվա ավարտական կուրսերի ուսանողների առցանց ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ ամփոփ տվյալներ:

2. **Լսեցին** – ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասընթացների ավարտի և քննաշրջանի մեկնարկի մասին:
/ Զեկուցողներ՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասընթացների ավարտի և քննաշրջանի մեկնարկի մասին ամփոփ տվյալներ:

3. **Լսեցին** – ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասընթացների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:
/Զեկուցող՝ ՀՈՒՖ փոխդեկան Մ. Գարեյան/
Ներկայացվեց ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասընթացների նախապատրաստական աշխատանքները և դիտարկվեցին որոշ նկատառումներ:
4. **Լսեցին** – ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2020թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առցանց դասերի և լուծարային շրջանի անցկացման նպատակով նախագծված էլեկտրոնային դեկանատի բովանդակային ու տեխնիկական բնութագրի մասին:

/Զեկուցողներ՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան, ՏՏ բաժնի վարիչ Մ. Հովհաննիսյան/

Ներկայացվեցին ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2020թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առցանց դասերի և լուծարային շրջանի անցկացման նպատակով նախագծված էլեկտրոնային դեկանատի բովանդակային ու տեխնիկական բնութագրի կատարելագործման վերաբերյալ մանրամասներ:

5. Ուսանողների ուսման վարձերի վճարման վերաբերյալ:

   /Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ, գլխավոր հաշվապահ/

   Ներկայացվեց ուսանողների ուսման վարձերի վճարման, սոցիալապես անապահով ուանողներին ֆինանսական աջակցման վերաբերյալ ամփոփ տվյալներ:

6. **Լսեցին** – Ընթացիկ հարցեր:

   **6.1.** Ուսումնագիտական գործընթացին առնչվող հարցերի ներկայացում:

   /Զեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Ա. Կուտուզյան/

   Ներկայացվեց ուսանողական իրավունքները վերականգնել ցանկացող նախկին ուսանողների վերականգնման գործընթացն առցանց կազմակերպելու և արտերկրում սովորող ԳՊՀ ուսանողների ակադեմիական վիճակի, ստացած կրեդիտների վերաբերյալ դիտարկումներ, քննարկվեցին ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի առցանց դասընթացների իրականացման, ուսանողների հաշվառման, էլեկտրոնային դեկանատում դասընթացների, դրանց հղումների և դասաժամերի գրանցման, դասերի կատարողականների լրացման աշխատանքների հետ կապված մանրամասներ:

**Որոշեցին.**

1. Շրջանավարտներից պահանջել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի, պրակտիկաների օրագրերի, հաշվետվության և բնութագրերի էլեկտրոնային տարբերակները ներբեռնել ԳՊՀ առցանց համակարգ:
2. Համավարակային վտանգից հետո հավաքագրել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թղթային տարբերակները, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրախոսների և ղեկավարների կարծիքները, որոնք առկա են

էլեկտրոնային հարթակում, դեկանատներում տպել և պահել վավերացրած տարբերակներով:

3. Էլեկտրոնային դեկանատի համապատասխան բաժնում վերբեռնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ դիմող նախկին ուսանողների ուսանողական իրավունքների վերականգնման գործընթացը կազմակերպելու համար:
4. Շարունակաբար իրականացնել ԳՊՀ «learn.gsu» էլեկտրոնային ուսուցման համակարգում հեռակա ուսուցմամբ կրթական ծրագրերի էլեկտրոնային ռեսուրսների համալրման աշխատանքներ:
5. Կազմակերպել վերապատրաստման դասընթաց ԳՊՀ դասախոսների համար՝ ՏՏ բաժնի կողմից բուհի էլեկտրոնային դեկանատի նոր հնարավորություններն ու լուծումները ներկայացնելու և անխափան աշխատանք կազմակերպելու նպատակներով:
6. Ըստ ՀՈՒՖ կուրսերի՝ նշանակել պատասխանատուներ, հաճախումների վերահսկման, դասերի կատարողականի վերահսկման և տեխնիկական խնդիրների օպերատիվ լուծման համար:

Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Շ. Բաղդոյան

Գավառի պետական համալսարանի

2020 թվականի հունիսի 14-ի ռեկտորատի

նիստի արձանագրություն թիվ 11

ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասընթացների և լուծարային շրջանի առցանց անցկացման վերաբերյալ
2. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում քննաշրջանի առցանց ընթացքի վերաբերյալ
3. ՀՀ Կառավարության «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրում» նախատեսված՝ «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում» միջոցառման վերաբերյալ
4. «Աշխարհը 2030 թվականին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի հանրային հարցաշարի լրացման վերաբերյալ
5. Ուսանողների ուսման վարձերի վճարման մասին
6. Ընթացիկ հարցեր

Նիստը տեղի ունեցավ առցանց եղանակով:

1. **Լսեցին** – ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասընթացների և լուծարային շրջանի առցանց անցկացման վերաբերյալ:
/Զեկուցող՝ ՀՈՒՖ փոխդեկան Մ. Վ. Գարեյան/

Ներկայացվեց տեղեկատվություն ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասընթացների և լուծարային շրջանի առցանց անցկացման վերաբերյալ:

2. **Լսեցին** – ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում քննաշրջանի առցանց ընթացքի վերաբերյալ:
/Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ/
Ներկայացվեցին ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում քննաշրջանի առցանց ընթացքի վերաբերյալ ամփոփ տվյալներ:

3. **Լսեցին** – ՀՀ Կառավարության «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրում» նախատեսված՝ «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում» միջոցառման վերաբերյալ:

/Զեկուցող՝ ԳՊՀ ռեկտոր՝ Ռ. Հակոբյան/

Ներկայացվեց ՀՀ Կառավարության «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրում» նախատեսված՝ «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում» միջոցառման նպատակը, իրականացման ձևերն ու կառուցակարգերը:

4. **Լսեցին** – «Աշխարհը 2030 թվականին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի հանրային հարցաշարի լրացման վերաբերյալ:

/Զեկուցող՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

Ներկայացվեցին «Աշխարհը 2030 թվականին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի հանրային հարցաշարի լրացման կարգը, ձևաչափը:

5. **Լսեցին** – Ուսանողների ուսման վարձերի վճարման մասին:

/Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ, գլխավոր հաշվապահ/

Ներկայացվեց ուսանողների ուսման վարձերի վճարման, սոցիալապես անապահով ունանողներին ֆինանսական աջակցության վերաբերյալ ամփոփ տվյալներ:

6. **Լսեցին** – Ընթացիկ հարցեր:

6. 1. ԳՊՀ 2020-2021 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության մասին:

/Զեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Ա. Կուտուզյան/

Ներկայացվեց 2020-2021 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության առցանց կազմակերպման, համապատասխան հարցաշարերի տրամադրման, դիմորդների փաստաթղթերի առցանց հավաքագրման և ամբողջականացման գործընթացը:

**Որոշեցին.**

1. Ապահովել ՀՈՒՖ ուսանողների կողմից դասընթացների կուրսային և անհատական աշխատանքների էլեկտրոնային եղանակով ներբեռնումը՝ համապատասխան էլեկտրոնային հարթակ:
2. Աշխատակիցներին ուղարկել «Աշխարհը 2030 թվականին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի հանրային հարցաշարի հղումը՝ լրացնելու նպատակով:
3. Իրականացնել ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման /learn.gsuam/ համակարգի ամբիոնային և ներֆակուլտետային ստուգումներ՝ պարզելու ՀՈՒՖ կուրսերում ուսումնասիրվող այն դասընթացները, որոնց գծով դասախոսությունները, անհատական, կուրսային աշխատանքների թեմաները, միջանկյալ և ամփոփիչ քննությունների հարցաշարերը, առաջարկվող մասնագիտական գրականության ցանկը, այլ ուսումնական նյութեր լիարժեք չեն և զգուշացնել դասախոսներին՝ համապատասխան ուսումնական նյութերի օպերատիվ լրացման անհրաժեշտության մասին:
4. 2020-2021 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության առաջին փուլը կազմակերպել Գավառի պետական համալսարանի մագիստրատուրայի 2020-2021 ուսումնական տարվա առցանց ընդունելության կարգի համաձայն:
5. Շրջանավարտների համար սահմանել անհատական ժամանակացույց համապատասխան փաստաթղթերը համալսարան հանձնելու և դիպլոմները ստանալու համար՝ խստորեն պահպանելով հակահամաճարակային անվտանգության նորմերը:
6. Հետևողական լինել ուսման վարձերի՝ ամենամսյա պարբերականությամբ հավաքագրմանը:

Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Շ. Բաղդոյան

**Գավառի պետական համալսարանի**

**2020 թվականի հունիսի 21-ի ռեկտորատի**

**նիստի արձանագրություն թիվ 12**

**ՕՐԱԿԱՐԳ**

1. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի առցանց դասընթացների և լուծարային շրջանի վերաբերյալ
2. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում քննաշրջանի առցանց ընթացքի մասին
3. ԳՊՀ 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտներին դիպլոմների շնորհման գործընթացի ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ
4. 2020 թ. հուլիսի 5-ին ԳՊՀ 23-րդ գիտաժողովի նախապատրաստման և առցանց անցկացման մասին՝ նվիրված Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին
5. Ուսանողների ուսման վարձերի վճարման մասին
6. Ընթացիկ հարցեր

Նիստը տեղի ունեցավ ընդլայնված կազմով, առցանց եղանակով:

1. **Լսեցին** – ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի առցանց դասընթացների և լուծարային շրջանի վերաբերյալ:
/Զեկուցող՝ ՀՈՒՖ փոխդեկան Մ. Վ. Գարեյան/

Ներկայացվեց տեղեկատվություն ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասընթացների և լուծարային շրջանի առցանց անցկացման վերաբերյալ:

2. **Լսեցին** – ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում քննաշրջանի առցանց ընթացքի վերաբերյալ:
/Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ/
Ներկայացվեցին ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում քննաշրջանի առցանց ընթացքի վերաբերյալ տվյալներ:

3. **Լսեցին** – ԳՊՀ 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտներին դիպլոմների շնորհման գործընթացի ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ: /Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ, Վ. Արզաքանցյան, Մ. Հովհաննիսյան/

Ներկայացվեցին ԳՊՀ 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտներին դիպլոմների շնորհման գործընթացի ուղղությամբ կատարված աշխատանքները:

4. **Լսեցին** – 2020 թ. հուլիսի 5-ին ԳՊՀ 23-րդ գիտաժողովի նախապատրաստման և առցանց անցկացման մասին՝ նվիրված Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին:

/Զեկուցող՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/

Ներկայացվեց 2020 թ. հուլիսի 5-ին Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին նվիրված ԳՊՀ 23-րդ գիտաժողովի լիագումար նիստի և մասնագիտական բաժանմունքներում աշխատանքների նախապատրաստման գործընթացը:

5. **Լսեցին** – Ուսանողների ուսման վարձերի վճարման մասին:

/Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ, գլխավոր հաշվապահ/

Ներկայացվեցին ուսանողների ուսման վարձերի վճարման, սոցիալապես անապահով ուսանողներին ֆինանսական աջակցության վերաբերյալ տվյալներ:

6. **Լսեցին** – Ընթացիկ հարցեր:

**6. 1.** Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի կառավարման և ֆինանսների ամբիոնի Ը.00.03-«Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ ասպիրանտուրայի գիտակրթական ծրագրի երկրորդ և երրորդ կուրսերի ասպիրանտների տարեկան աշխատանքային պլանների հետազոտական կառուցամասով նախատեսված գիտակրթական մոդուլների կատարման տարեկան առցանց ատեստավորման մասին:

/Զեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Ա. Կուտուզյան/

Ներկայացվեց ասպիրանտների տարեկան աշխատանքային պլանների հետազոտական կառուցամասով նախատեսված գիտակրթական մոդուլների կատարման տարեկան ատեստավորման առցանց գործընթացի նախապատրաստման հարցը:

**Որոշեցին.**

1. Դիպլոմները և դրանց հավելվածները պատրաստել սահմանված կարգի համաձայն և ապահովել դիպլոմներում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների ստորագրությունները՝ անհատական կարգով:
2 Պահպանել ԳՊՀ գիտաժողովին ներկայացված գիտական զեկուցումներին առաջադրվող պահանջները և վերջնաժամկետը:
3 Ասպիրանտների տարեկան աշխատանքային պլանների հետազոտական կառուցամասով նախատեսված գիտակրթական մոդուլների կատարման տարեկան ատեստավորման առցանց գործընթացն իրականացնել 2020թ. հուլիսի 8-ին:
4 Հետևողական լինել ուսման վարձերի ամենամսյա պարբերականությամբ հավաքագրմանը:

Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Շ. Բաղդոյան

**Գավառի պետական համալսարանի**

**2020 թվականի հուլիսի 2-ի ռեկտորատի**

**նիստի արձանագրություն թիվ 13**

**ՕՐԱԿԱՐԳ**

1. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2020թ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի առցանց դասընթացների և լուծարային շրջանի վերաբերյալ
2. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի առցանց ընթացքի մասին
3. ԳՊՀ 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտների դիպլոմների շնորհման գործընթացի վերաբերյալ

4. 2020 թ. հուլիսի 5-ին Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին նվիրված ԳՊՀ 23-րդ առցանց գիտաժողովի ծրագրի մասին
5. Ուսանողների ուսման վարձավճարների հավաքագրման վերաբերյալ
6. Ընթացիկ հարցեր

Նիստը տեղի ունեցավ առցանց եղանակով:

1. **Լսեցին** – ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի առցանց դասընթացների և լուծարային շրջանի վերաբերյալ:

/Զեկուցող՝ ՀՈՒՖ փոխդեկան Մ. Վ. Գարեյան/

Ներկայացվեց ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դասընթացների և լուծարային շրջանի առցանց անցկացման վերաբերյալ ամփոփ տվյալներ:

2. **Լսեցին** – ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի առցանց ընթացքի մասին:

/Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ/

Ներկայացվեցին տեղեկատվություն ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում քննաշրջանի առցանց ընթացքի վերաբերյալ:

3. **Լսեցին** – ԳՊՀ 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտների դիպլոմների շնորհման գործընթացի վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ, Մ. Գարեյան /

Ներկայացվեցին ԳՊՀ 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտներին դիպլոմների շնորհման գործընթացի ուղղությամբ կատարված աշխատանքները:

4. **Լսեցին** – 2020 թ. հուլիսի 5-ին Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին նվիրված ԳՊՀ 23-րդ առցանց գիտաժողովի ծրագրի մասին:

/Զեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան /

Ներկայացվեց 2020 թ. հուլիսի 5-ին Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին նվիրված ԳՊՀ 23-րդ գիտաժողովի նախապատրաստման և առցանց անցկացման, ըստ ենթաբաժանմունքների ներկայացված հոդվածների, մասնակիցների թվաքանակի /գիտաժողովին առցանց մասնակցության հայտ է ուղարկել 112 հեղինակ և համահեղինակ՝ ներկայացնելով 100 զեկուցում/, ծրագրի մշակման, համապատասխան հղումների ներառման, տեխնիկական պատասխանատուների բաշխման մասին ամփոփ տվյալներ:

5. **Լսեցին –** Ուսանողների ուսման վարձերի վճարման մասին:

/Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ, գլխավոր հաշվապահ/

Ներկայացվեց ուսանողների ուսման վարձերի վճարման, սոցիալապես անապահով ուանողներին ֆինանսական աջակցման վերաբերյալ ամփոփ տվյալներ:

6. **Լսեցին** – Ընթացիկ հարցեր:

**6. 1.** Ուսումնական պլանների և մասնագրերի մշակման վերաբերյալ:

/Զեկ.՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

Քննարկվեցին ուսումնական և աշխատանքային պլանների, մասնագրերի կազմման և վերանայման վերաբերյալ որոշ նկատառումներ:

**6. 2.** 2020 թ. հուլիսի 5-ին Վենետիկի Մխիթարյան միաբանության քահանայապետական պատվիրակ Սրբազան հայր Լևոն Զեքիյանի հետ կայանալիք հանդիպման մասին:

/Զեկուցող՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/

Ներկայացվեց, որ Վենետիկի Մխիթարյան միաբանության քահանայապետական պատվիրակ, Թուրքիայի Հայ կաթողիկե եկեղեցու թեմի առաջնորդ Գերապայծառ Տեր Լևոն արքեպիսկոպոս Զեքիյանը ս. թ. հուլիսի 5-ին, ժամը 18. 00-ին առցանց կմիանա գիտաժողովի աշխատանքներին և կողջունի ձեռնարկը, բոլոր մասնակիցներին, հանդես կգա Հայր Ղևոնդ Ալիշանի գործունեության վերաբերյալ զեկուցմամբ::

Նշվեց, որ նախ կգումարվի լիագումար նիստ, որտեղ կներկայացվեն զեկուցումներ Ղևոնդ Ալիշանի հայագիտական, գրական հարուստ ժառանգության մասին, ապա գիտաժողովն իր աշխատանքները կշարունակի հինգ մասնագիտական բաժանմունքներում:

**Որոշեցին.**

1. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում լուծարային շրջանը երկարաձգել՝ թույլատրելով հանձնել ս. թ. սեպտեմբեր ամսին՝ ՀՀ-ում արտակարգ դրության իրավական ռեժիմը հաշվի առնելով:
2. 2020 թ. հուլիսի 5-ին կայանալիք Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին նվիրված ԳՊՀ 23-րդ առցանց գիտաժողովի ծրագիրը հղել բոլոր մասնակիցներին և ապահովել գիտաժողովի անխափան աշխատանքը:
3. Շրջանավարտների դիպլոմները շնորհել հատուկ ժամանակացույցով, անհատական կարգով՝ պահպանելով արտակարգ դրության պայմաններում անվտանգության կանոնները:
4. Ուսումնական պլանների և մասնագրերի բարելավման համար կազմակերպել քննարկումներ՝ ըստ ֆակուլտետների:
5. Ապահովել էլեկտրոնային գործավարության և փաստաթղթաշրջանառության պատշաճ իրականացում:
6. Հետևողական լինել ուսման վարձերի՝ ամենամսյա պարբերականությամբ հավաքագրմանը:

Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Շ. Բաղդոյան

Գավառի պետական համալսարանի

2020 թվականի օգոստոսի 20-ի ռեկտորատի

նիստի արձանագրություն թիվ 14

ՕՐԱԿԱՐԳ

1. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2020-2021 ուստարվա ուսումնական պարապմունքների, քննաշրջանի, լուծարային շրջանների անցկացման ժամանակացույցի վերաբերյալ
2. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների, դասընթացների անցկացման ձևաչափի, հակահամաճարակային կանոնների խստիվ պահպանման մասին
3. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի, լուծարային շրջանի ժամանակացույցի և անցկացման գործընթացի մասին
4. Ընթացիկ հարցեր

Նիստը տեղի ունեցավ ընդլայնված կազմով:

1. **Լսեցին** – ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2020-2021 ուստարվա ուսումնական պարապմունքների, քննաշրջանի, լուծարային շրջանների անցկացման ժամանակացույցի վերաբերյալ:
/Զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/
Ներկայացվեց և քննարկվեց ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2020-2021 ուստարվա ուսումնական պարապմունքների, քննաշրջանի, լուծարային շրջանների անցկացման ժամանակացույցը:
2. **Լսեցին** – ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների, դասընթացների անցկացման ձևաչափի, հակահամաճարակային կանոնների խստիվ պահպանման մասին:
/Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ/
Ներկայացվեցին ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների, դասընթացների անցկացման ձևաչափի, հակահամաճարակային կանոնների խստիվ պահպանման մասին մանրամասներ և դիտարկումներ:

3. **Լսեցին** – ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի, լուծարային շրջանի ժամանակացույցի և անցկացման գործընթացի մասին:

/Զեկուցողներ՝ պրոռեկտոր Ն. Կուտուզյան, փոխդեկան Մ. Գարեյան/

ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի, լուծարային շրջանի ժամանակացույցի և անցկացման գործընթացի մասին ամփոփ տվյալներ:

4. **Լսեցին** – Ընթացիկ հարցեր:

**4. 1.** ԳՊՀ մագիստրատուրայի 2020-2021ուսումնական տարվա ընդունելության երկրորդ փուլի կազմակերպման մասին:

/Զեկուցող՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/

Քննարկվեցին մագիստրատուրայի 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության երկրորդ փուլի կազմակերպման, անցկացման ձևաչափի և ժամկետների վերաբերյալ հարցեր:

**4. 2.** Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում կայանալիք ուսանողական գիտական նստաշրջանի վերաբերյալ:

/Զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

Ներկայացվեց Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում կայանալիք ուսանողական գիտական նստաշրջանի ԳՊՀ ուսանողների մասնակցության վերաբերյալ հարցեր:

4. **3.** ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեից ստացած գրության վերաբերյալ:

/Զեկուցող՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Ա. Կուտուզյան/

Ներկայացվեց ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեից ստացած գրության բովանդակությունը և պահանջը:

**Որոշեցին.**

1. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2020-2021 ուստարվա ուսումնական պարապմունքները, քննաշրջանը, լուծարային շրջաններն անցկացնել ՀՀ պարետի որոշումներին համապատասխան:
2. Խստագույնս պահպանել հակահամաճարակային անվտանգության կանոնները:
3. Ֆակուլտետների կողմից ներկայացնել պատասխանատուների ցանկ՝ դասամիջոցներին, հակահամաճարակային անվտանգության կանոնները չխախտելու նպատակով, հսկողություն իրականացնելու համար:
4. 2020-2021 ուսումնակա տարվա բարեփոխված ուսումնական պլանները, մասնագիտական կրթական ծրագրերը, դասախոսների անհատական բեռնվածքները ներկայացնել հաստատման:
5. Առցանց ձևաչափով իրականացված դասերի, քննաշրջանի, լուծարային շրջանի, ամփոփիչ ատեստավորման քննությունների բոլոր էլեկտրոնային փաստաթղթերը դարձնել թղթային:
6. Ամբողջականացնել ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներում իրականացված 2019-2020 ուստարվա ինքնավերլուծությունները:
7. Ներկայացնել պահանջագրեր՝ դասամատյաններ ստանալու համար:
8. Ֆակուլտետներից ապահովել ուսանողների մասնակցություն Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում կայանալիք ուսանողական գիտական նստաշրջանին:
9. Ներկայացնել առաջարկություններ ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեից ստացած գրության վերաբերյալ:

Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Շ. Բաղդոյան

**Գավառի պետական համալսարանի**

**2020 թվականի սեպտեմբերի 9-ի ռեկտորատի**

**նիստի արձանագրություն թիվ 15**

**ՕՐԱԿԱՐԳ**

1. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում բակալավրիատի առաջին կուրսերի դասընթացների անցկացման, բարձր կուրսերի և մագիստրատուրայի դասերի նախապատրաստման, 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի լուծարային շրջանի վերաբերյալ /զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ/
2. Ուսանողների կողմից բակալավրիաատի և մագիստրատուրայի ուսումնական պլաններով նախատեսված կամընտրական կրթամասի դասընթացների ընտրության վերաբերյալ/զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ/
3. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի առցանց անցկացման ընթացքի վերաբերյալ /զեկուցող՝ Մ. Գարեյան/
4. ԳՊՀ ֆակուլտետների, կառուցվածքային այլ ստորաբաժանումների 2019-2020 ուսումնական տարվա գործունեության մշտադիտարկման պլանների ներկայացման վերաբերյալ /զեկուցող՝ Ն. Կուտուզյան/
5. Հայաստանի Հանրապետության գիտական աստիճաններ և կոչումներ շնորհելու մասնագիտությունների անվանացանկերի վերանայման համար Բարձրագույն որակավորման կոմիտեի գրության վերաբերյալ /զեկուցողներ՝ Ն. Կուտուզյան, ԳՊՀ դեկաններ/
6. Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին նվիրված ԳՊՀ 23-րդ գիտաժողովի նյութերի տպագրման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ/զեկուցողներ՝ Ն. Կուտուզյան, ԳՊՀ դեկաններ/
7. Ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին ռեկտորատի 12 անդամներ:

1. **Լսեցին –** ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում բակալավրիատի առաջին կուրսերի դասընթացների անցկացման, բարձր կուրսերի և մագիստրատուրայի դասերի

նախապատրաստման, 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի լուծարային շրջանի վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ/

Ներկայացվեց բակալավրիատի առաջին կուրսերի դասընթացների անցկացման ընթացքը, բարձր կուրսերի և մագիստրատուրայի դասերի նախապատրաստական աշխատանքները և լուծարային շրջանի ժամանակացույցի և անցկացման գործընթացի մասին ամփոփ տվյալներ:

2. **Լսեցին –** Ուսանողների կողմից բակալավրիաատի և մագիստրատուրայի ուսումնական պլաններով նախատեսված կամընտրական կրթամասի դասընթացների ընտրության վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ/

Ներկայացվեց ուսանողների կողմից բակալավրիաատի և մագիստրատուրայի ուսումնական պլաններով նախատեսված կամընտրական կրթամասի դասընթացների ընտրության վերաբերյալ մանրամասներ և դիտարկումներ:

3. **Լսեցին –** ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի առցանց անցկացման ընթացքի վերաբերյալ:

/Զեկուցող՝ Մ. Գարեյան/

Ներկայացվեց ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի, լուծարային շրջանի առցանց անցկացման գործընթացի մասին ամփոփ տվյալներ:

4. **Լսեցին –** ԳՊՀ ֆակուլտետների, կառուցվածքային այլ ստորաբաժանումների 2019-2020 ուսումնական տարվա գործունեության մշտադիտարկման պլանների ներկայացման վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ն. Կուտուզյան/

Ներկայացվեց կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրականացված գործողությունների և դրանց մշտադիտարկամաn արդյունքների մասին տեղեկատվությունը:

5. **Լսեցին** – Հայաստանի Հանրապետության գիտական աստիճաններ և կոչումներ շնորհելու մասնագիտությունների անվանացանկերի վերանայման համար Բարձրագույն որակավորման կոմիտեի գրության վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ն. Կուտուզյան, ԳՊՀ դեկաններ/

Զեկուցողները նշեցին, որ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից Հայաստանի Հանրապետության գիտական աստիճաններ և կոչումներ շնորհելու մասնագիտությունների անվանացանկերը վերանայելու աշխատանքները ընթացքի մեջ են: Առաջարկությունները կներկայացվեն զեկուցագրերով դեկանատների կողմից:

6. **Լսեցին** – Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին նվիրված ԳՊՀ 23-րդ գիտաժողովի նյութերի տպագրման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ն. Կուտուզյան, ԳՊՀ դեկաններ/

Ներկայացվեց ԳՊՀ 23-րդ (8-րդ) գիտաժողովի՝ տպագրության երաշխավորված զեկուցումների հավաքագրման աշխատանքների մասին ամփոփ տվյալներ:

7. **Լսեցին** – Ընթացիկ հարցեր:

**7. 1.** ԳՊՀ 2020-2021 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելություն կազմակերպման մասին:

/Զեկուցող՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/

Ներկայացվեց հեռակա ուսուցման ընդունելության ուղղությամբ տարվող աշխատանքները և ժամանակացույցը:

**7. 2**. Ուսումնագիտականկան գործընթացին առնչվող հարցերի ներկայացում:

/ Զեկուցող ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Ա. Կուտուզյան/

Ներկայացվեցին և քննարկվեցին մի շարք հարցեր՝ կապված դասախոսների ծանաբեռնվածությունների ստուգման, ամբիոնի վարիչների հաշվետվությունների ժամանակացույցի կազմման և հաստատման հետ:

**Որոշեցին.**

1. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում 2020-2021 ուստարվա ուսումնական պարապմունքները, քննաշրջանը, լուծարային շրջաններն անցկացնել ՀՀ պարետի որոշումներին համապատասխան:
2. Խստագույնս պահպանել հակահամաճարակային անվտանգության կանոնները:

3. Ներկայացնել առաջարկություններ ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեից ստացած գրության վերաբերյալ:
4. ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների իրականացրած գործողությունների և դրանց արդյունքների մշտադիտարկման պլանների ներկայացման վերջնաժամկետը սահմանել մինչև սեպտեմբերի 30-ը:
5. Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին նվիրված ԳՊՀ գիտաժողովի՝ տպագրության երաշխավորված զեկուցումների նյութերը մինչև ս.թ. հոկտեմբերի 20-ը սահմանված ձևաչափով ներկայացնել խմբագրական խորհուրդ:
6. Ամբիոնի վարիչների հաշվետվությունն իրականացնել ըստ հաստատված ժամանակացույցի:

Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Ք. Հայրապետյան

**Գավառի պետական համալսարանի**

**2020 թվականի սեպտեմբերի 16-ի ռեկտորատի**

**նիստի արձանագրություն թիվ 16**

**ՕՐԱԿԱՐԳ**

1. Կարանտինի պայմաններում Գավառի պետական համալսարանում սանիտարական կանոնների պահպանման մասին /Զեկուցող՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/
2. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում դասընթացների և լուծարային շրջանի առցանց կազմակերպման վերաբերյալ /զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ/
3. ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի առցանց անցկացման մասին /զեկուցող՝ Մ. Գարեյան/
4. ԳՊՀ ամենամյա ինքնավերլուծության գործընթացի անցկացման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ /զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր/
5. Սոցիալապես անապահով ընտանիքների երեխա-ուսանողների և սահմանամերձ բնակավայրերի բնակիչ ուսանողների ուսման վարձերի փոխհատուցման մասին/զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ, գլխավոր հաշվապահ/
6. Ուսանողների ուսման վարձերի վճարման մասին /զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ, գլխավոր հաշվապահ/
7. Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին** - Կարանտինի պայմաններում Գավառի պետական համալսարանում սանիտարական կանոնների պահպանման մասին:
   /Զեկուցող՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/

Ներկայացվեց կարանտինի պայմաններում Գավառի պետական համալսարանում հակահամաճարակային կանոնների խստիվ պահպանման մասին մանրամասներ և դիտարկումներ:

2. **Լսեցին** - ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում դասընթացների և լուծարային շրջանի առցանց կազմակերպման վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ/

Ներկայացվեցին ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետներում իրականացվող առցանց դասերի, ուսանողների մասնակցության, լուծարային շրջանի ընթացքին առնչվող ամփոփ տվյալներ:

3. **Լսեցին** - ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի առցանց անցկացման մասին:

   /Զեկուցող՝ Մ. Գարեյան/

   Ներկայացվեց ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետում 2020թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի, լուծարային շրջանի առցանց անցկացման գործընթացի մասին ամփոփ տվյալներ:

4. **Լսեցին** - ԳՊՀ ամենամյա ինքնավերլուծության գործընթացի անցկացման նախապատրաստական աշխատանքների մասին:

   /Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ, ուսումնագիտական գծով պրոռեկտոր/

   Նշվեց, որ ԳՊՀ ամենամյա ինքնավերլուծության գործընթացի կազմակերպման նպատակով 2019-2020թ. ինքնավերլուծության համալսարանական և ֆակուլտետային աշխատանքային խմբերը արդեն կազմված են և շուտով կկատարվի նաև ինքնավերլուծության ձևաչափի չափանիշների բաժանումն ըստ աշխատանքային խմբերի:

5. **Լսեցին** - Սոցիալապես անապահով ընտանիքների երեխա-ուսանողների և սահմանամերձ բնակավայրերի բնակիչ ուսանողների ուսման վարձերի փոխհատուցման մասին:

   /Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ, գլխավոր հաշվապահ/

   Ներկայացվեց, որ սոցիալական անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող, սահմանամերձ համայնքներում ապրող, ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցման համար համապատասխան հիմքերի հավաքման գործընթացն ընթացքի մեջ է:

6. **Լսեցին** - Ուսանողների ուսման վարձերի վճարման մասին:

   /Զեկուցողներ՝ ԳՊՀ դեկաններ, գլխավոր հաշվապահ/

Ներկայացվեցին ուսանողների ուսման վարձերի հավաքագրման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

7. **Լսեցին –** Ընթացիկ հարցեր:

**7. 1.** ԳՊՀ ֆակուլտետների և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից 2019-2020 ուսումնական տարվա ինքնավերլուծության իրականացման, գործունեության հաշվետվության և 2020-2021 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացման մասին:

/Զեկ.՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Ա. Կուտուզյան/:

**Որոշեցին.**

1. Խստագույնս պահպանել հակահամաճարակային անվտանգության կանոնները:
2. Հետևողական աշխատանք իրականացնել սոցիալական անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող, ինչպես նաև սահմանային բնակավայրերից ԳՊՀ ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցման կազմակերպման համար փաստաթղթային փաթեթների պատշաճ ներկայացման նպատակով:
3. Հետևողական լինել ուսման վարձերի՝ սահմանված ժամկետներում վճարման ընթացքին:
4. Ներկայացնել ԳՊՀ ֆակուլտետների և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից 2019-2020 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունները և 2019-2020 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգերը:

Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Ք. Հայրապետյան